



Конституция Армении (проект). Армянское уложение законов для управления страной Армянской, 1773 г.: Пер. с древнеармянского Хацатуряна А. Б., М., изд-во МГОПУ, 1998, 106 с.

Չայ տեսական միտքը հարուստ է ազգային ու համամարդկային հնչեղություն ունեցող հետաքրքիր հուշարձաններով, որոնցում առաջ քաշված գաղափարները այսօր էլ մնում են արդիական: Ամենատարբեր պատճառներով դրանք ոչ միայն չեն դրվել շրջանառության մեջ, այլև հաճախ չեն արժանացել պատշաճ ուշադրության: Ենթան հուշարձաններից է Չայաստանի առաջին Սահմանադրության նախագիծը՝ «Որոգայթ փառացը»: Այս իմաստով տարբեր լեզուներով նրա թարգմանությունը ունի ոչ միայն պատմա-մշակութային, տեսական-ճանաչողական, այլև մեր նորակախ պետության համար՝ նաև քաղաքական նշանակություն: Սիւս թե ինչու կարելի է անգնահատելի համարել հայոց առաջին Սահմանադրության նախագիծը ուսերեն հրատարակությունը: Այն թարգմանել և արժեքավոր ծանոթագրություններով լույս է ընծայել պրոֆ. Ա. Բ. Խաչատուրյանը (Մոսկվա): Թարգմանիչը 18-19-րդ դդ. հայ մշակույթի և փիլիսոփայության պատմության խոշորագույն մասնագետ է, որն ապրելով Մոսկվայում՝ իր հետազոտություններով ռուս ընթերցողին իրագրել է դաժձնում հայ մշակույթին և փիլիսոփայությանը: Այս աշխատանքով հեղինակը, կարելի է ասել, յուրատեսակ նվեր է մատուցել ինքն իրեն՝ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ:

Չայաստանի առաջին սահմանադրության նախագիծը՝ «Որոգայթ փառացը», որի տեսական բաժինը լույս է տեսել 1773 թ. Սադրատում, հրատարակվել է մի քանի տասնյակ օրինակով՝ ոչ բոլորի համար մատչելի գրաբարով: Վերջին անգամ այն լույս է տեսել 1913 թ. Թիֆլիսում և այժմ դարձել է մատենագիտական հազվագյուտ օրինակ: Չայ իրավագիտական մտքի այդ մեծարժեք հուշարձանը վերջապես լույս տեսավ նաև ուսերեն, որը, փստաի ենք, մեծապես կնպաստի օտար մասնագետների կողմից հայ իրավագիտական մտքի նվաճումների ուսումնասիրությանն ու գնահատությանը: Դեռ նետելով ավելորդ համետությունը՝ նկատում է Ա. Խաչատուրյանը, կարելի է համարձակորեն ասել, որ Չայաս-

տանի այդ Սահմանադրությունը եվրոպայում և Չյուսիսային Ամերիկայում ժողովրդավարական պետությունների ծագման ժամանակաշրջանի իրավա-քաղաքական փաստաթղթերի գարմանալի հուշարձաններից է և կարող է փառք ու պատիվ բերել ցանկացած մեծ ազգի (տե՛ս էջ 92):

Ո՞րն է Սահմանադրության նախագիծը լույս տեսնելուց շուրջ 2,5 դար հետո նրա ուսերեն թարգմանության իմաստը: Թարգմանիչն այդ հարցին պատասխանում է հետևյալ կերպ. նախ և առաջ՝ այն իրենից ներկայացնում է պատմական հետաքրքրություն, և երկրորդ՝ նրա շատ հողվածներն այսօր էլ արդիական են, իսկ սկզբունքները՝ հավերժ: Պրոֆ. Ա. Խաչատուրյանի իրավագիտ կարծիքով թարգմանությունը հնարավորություն է տալիս տեսնելու «հայ հասարակական-քաղաքական մտքի ծառայությունը նոր ժողովրդավարության գաղափարների գարգացման մեջ» (էջ 5):

Նախաբանում թարգմանիչը նշում է, որ նրա ոչ բոլոր հողվածներն են կրում սահմանադրական բնույթ: Զիչ չեն այնպիսի հողվածները, որոնք վերաբերում են քաղաքացիական ու աշխատանքային կողբքներին, քրեական ու քաղաքացիական իրավունքին, ինչպես նաև պետական փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, պայմանագրերի մտուշների նկարագրություն, որոնք չի կարելի դասել երկրի ու պետության հիմնական օրենքների թվին (տե՛ս էջ 3): Դա, իրողք, այդպես է, սակայն դրանցից չի կարելի ենթադրել, որ Սահմանադրության հեղինակները չէին հասկանում սահմանադրության ու պետության օրենքների տարբերությունը: Պարզապես, ինչպես իրավագիտորեն նկատում է թարգմանիչը, վաղուց իր պետականությունը կորցրած և մասնատված Չայաստանը գտնվում էր իրավական «փլատակների» մեջ, և Սահմանադրության հեղինակները հետապնդում էին կրկնակի նպատակ՝ ստեղծել սահմանադրություն և Չայաստանի օրենքների ժողովածու: Սի բան, որ նրանք արել են հաջողությամբ: Չպետք է մոռանալ նաև, որ հայ հեղինակները որպես

նմուշ ձեռքի տակ չունեին սահմանադրության որևէ գրավոր օրինակ: Ելնելով հայոց առաջին Սահմանադրության այս յուրահատկությունից, ուսեբեն թարգմանության հեղինակը փորձել է խմբավորել հողվածները ըստ ուղղվածության և սկզբունքների, համել է տեխնիկական բնույթի որոշ հողվածներ: Արդյունքում փաստաթուղթը դարձել է տրամաբանորեն կուռ և հետևողական կրելով, սակայն, կառուցվածքային փոփոխություններ: Դա է վկայում թարգմանության մեջ հողվածների կրկնակի համարակալումը, որը շեղում է բնօրինակից: Կարծում եմ, ժիշտ կլինե՞ր նախ իբրև գրավոր պատմական հուշարժան ներկայացվե՞ր իր նախնական տեսքով, իսկ վերջում՝ հավելվածի ձևով՝ վերակառուցված տարբերակը: Այսպես կարող է ստեղծվել տպավորություն, որ թարգմանիչը ցանկալին ներկայացնում է որպես իրողություն:

Ինչպես ամեն մի սահմանադրություն, հայոց առաջին Սահմանադրությունը ևս հենվում է որոշ սկզբունքների վրա: Դրանք այն գաղափարներն են, որոնք գերիշխող են 17-18-րդ դարերի եվրոպական և հայ տեսական մտքի մեջ: Դրանցից հիմնականներն են՝ մարդու ազատությունը և հավասարությունը, ժողովուրդների ազատությունն ու իրավահավասարությունը, Հայաստանի տարածքում ապրող բոլոր էթնիկ խմբերի ավանդույթների ու սովորույթների ընդունումն ու հարգումը, նրանց իրավունքների պաշտպանությունը, համընդհանուր և հավասար ընտրական իրավունքը, օրենքների գերակայությունը, իշխանության թևերի տարանջատումը, խղճի ազատությունը, պետությունից եկեղեցու և եկեղեցուց դպրոցի անջատումը և այլն: Հայոց սահմանադրության մեջ այս սկզբունքների առկայությունը, նկատում է հեղինակը, «թույլ է տալիս այն գնահատել որպես ժողովրդական պաշտպանության հանրապետության սահմանադրություն» (էջ 4): Սակայն, թարգմանիչն իրավացիորեն նկատում է նաև, որ այնտեղ կան որոշ հակասություններ, որոնք հիմք են տալիս ասելու, որ նախագծի հեղինակը միշտ չէ մինչև վերջ հետևողականորեն զարգացնում վերը նշված մարդասիրական ու ժողովրդավարական սկզբունքները: Այսպես, օրինակ, ասվում է, որ Հայաստանի հանրապետությունում ընտրության իրավունքով օժտված են նաև կանայք և այլ ազգությունների ներկայացուցիչները, բայց նաև նշվում է, որ նրանք չեն կարող ընտրվել գերագույն իշխանության մեջ և գրավել պետական պաշտոններ: Կամ, ասենք, ընտրվելու իրավունք վերապահվում է միայն հայ առաքելական եկեղեցու տղամարդ անդամներին: Նախագծում կան նաև այլ հակասություններ և անհետևողական մտքեր, որոնք, լինելով պատմական պայ-

մանների ծնունդ ու արտահայտություն, պրոֆ. Խաչատուրյանի համոզմամբ, ըստ էության, չեն փոխում սահմանադրության սկզբունքային ժողովրդավարական էությունը և բովանդակությունը: Ավելին, նրա համոզմամբ, հայկական սահմանադրությունը 17-18-րդ դդ. եվրոպայում ծնված նոր ժողովրդավարության գաղափարախոսության վառ արտահայտությունն է և «պատիվ է բերում հայ ժողովրդի քաղաքական հանձարին» (էջ 4): Չպետք է մոռանալ, որ Հայաստանի սահմանադրությունը ստեղծվել է ԱՄՆ-ի (1779) և Ֆրանսիական հանրապետության (1791) սահմանադրություններից առաջ: Մի հանգամանք ևս. եթե եվրոպական ու ամերիկյան ժողովրդավարական սահմանադրություններն ստեղծվեցին նրանցում ժողովրդավարական ազատագրական շարժումների հաղթանակից հետո, ապա, ընդհակառակը, հայկական ստեղծվեց 18-րդ դարի հայ ազատագրական շարժման պարտությունից հետո, որի պատճառով այն, որպես նախագիծ, մնաց անավարտ:

Հեղինակը իրավամբ 18-րդ դ. 70-ական թթ. առաջին Սահմանադրությունը գնահատում է որպես ազգային-ազատագրական մտքի և հայ ժողովրդի ժողովրդավարական շարժման արտահայտություն, որն իր նշանակությամբ դուրս է գալիս այդ դարի շրջանակներից: Սեր կարծիքով, ժիշտ է հեղինակը, որ տեսական-գաղափարական կապ է տեսնում հայկական առաջին Սահմանադրության և արևմտաեվրոպական ու հյուսիսամերիկյան ժողովրդավարական մտքի նվաճումների միջև: Սակայն չպետք է մոռանալ, որ 18-րդ դ. հնդկահայ լուսավորականությունը նախ և առաջ հայ իրականության ծնունդ էր, սնվում էր նախորդ դարերի հայ տեսական մտքի նվաճումներից, յուրովի խորացնում և զարգացնում դրանք: Այն, որ հայ հեղինակները ծանոթ էին ժամանակաշրջանի եվրոպական մտքի (Լոկի, Ռուսոյի հասարակական դաշինքի, Մոնտեսքյոյի աշխարհագրական դետերմինիզմի և այլ տեսություններին) նորագույն դրսևորումներին, ինքնին գնահատելի է: Հարկ է նշել նաև, որ նման գաղափարներ և մտեցումներ առկա էին նաև 17-րդ դարի հայ մտքի մեջ, որից անմիջականորեն սնվել են հայ լուսավորիչները: Դրա պատճառը, մեր կարծիքով, հալադիտության մեջ քաղաքացիություն ստացած նոր մտեցումներին ծանոթ չլինելն է: Բանն այն է, որ հիմնավորված է գաղափարական այն ազգակցական կապը, որ գոյություն ուներ 18-րդ դ. երկրորդ կեսի հայ լուսավորիչների և 17-րդ դ. հայ մտածողների միջև (Ս. Ջուղայեցի, Գ. Ջուղայեցի, Ա. Դաշտեցի և ուրիշներ): Չպետք է նաև մոռանալ, որ հնդկահայ մտածողների մեծ մասը գաղթել էր Լոր Ջուղայից և ծանոթ էր նաև այնտեղ ընթացող

գործընթացներին (խնդրո առարկա հարցերի մասին մանրամասն տե՛ս Գ. Ղ. Սիրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քըն-նական վերլուծություն, Երևան, 1983, նույնի, Գնդկահայ լուսավորականության սկզբնա-րը, «Էքզիստենցիա», 1998, թիվ 7, և այլն):

Առաջին Սահմանադրությունը համարե-լով հիրավի պատմական փաստաթուղթ՝ Ա. Խաչատուրյանը նրա մեծագույն արժեքը տեսնում է նախ՝ այն, որ Սահմանադրության մեջ հայ քաղաքական ու իրավական ժողովրդ-դավարական գաղափարախոսությունն առա-ջին անգամ ներկայանում է ամբողջական ու համակարգված ձևով և երկրորդ, որ նրա կենտրոնական գաղափարները իրենց նշանա-կությունը չեն կորցրել հայ ազգային-ազա-տագրական պայքարի հետագա փուլերում: Պրոֆ. Ա. Խաչատուրյանը ընթերցողին ծանո-թացնում է նաև այն սոցիալ-քաղաքական ա-ռանձնահատկություններին, որով ապրում էր պետականությունից զուրկ Դայաստանը 17-18-րդ դարերում: Օտարի լծից ազատագրվելը և սեփական ինքնուրույն պետականության վերականգնումը դարձել էին օրախնդիր, որին հավատում էին Գ. Էմինը, Ս. Բաղրամյանը, Շ. Շահանիրյանը որպես օրինակ ունենալով Եվ-րոպայի և Ամերիկայի փորձը:

Խոսելով հայ սահմանադրության նա-խագծի մեջ ժողովրդավարական ուղղվածու-թյան, իրավական պետության և ժողովրդի ինքնուրույն գաղաքացման հիմնական սկզբ-բունքների մասին՝ թարգմանիչը ուշադրու-թյուն է դարձնում այն փաստի վրա, որ հնդկա-հայ սահմանադիրները կապում էին «ռաջիո-

նախիզմը դեմոկրատիզմի ու հանրապետակա-նության հետ, մարդկանց հավասարությունն ու ազատությունը՝ ժողովուրդների ազատու-թյան և հավասարության հետ» (էջ 92): Անդ-րադառնալով նոր շրջանի եվրոպական ժո-ղովրդավարական մտքի հիմնադիր Լոկի հա-յացքներին՝ նա իրավաչիորեն նշում է, որ հայ լուսավորիչներից հատկապես Գ. Էմինը ծանոթ է եղել մեծ անգլիացու աշխատանքներին, ի մասնավորի՝ նրա «Պետական կառավարման մասին» (1690 թ.) աշխատությանը: Այս կա-պակցությամբ պրոֆ. Ա. Խաչատուրյանը ա-նում է մի հետաքրքիր եզրահանգում: Եթե Զ. Լոկը, Ժ. Ժակ Ռուսոն սահմանափակվեցին միայն նոր ժամանակների ժողովրդավարու-թյան տեսական- գաղափարական հիմնավոր-մամբ, որտեղ նրանք չունեին իրենց հավասա-րը, ապա նրանց հայ հետևորդները, առաջ անցնելով, մշակեցին նոր ժողովրդավարա-կան պետության հիմնական օրենքի ման-րակրկիտ նախագիծը: Դա նոր էր և անչափ կարևոր: Գնդինակը հայ և եվրոպական լուսա-վորիչների հայացքների տարբերությունների հիմնական պատճառը համարում է այն, որ ե-թե եվրոպացիներն ունեին հզոր երկիր և պե-տականություն, ապա հայերը չունեին պետա-կանություն, և նրանց գերիադիրը այդ պետա-կանության վերականգնումն էր:

Այսպիսով, արժեքավոր այս աշխատան-քը գնահատելի է ոչ միայն թարգմանության միջոցով հայոց Սահմանադրությունը գիտա-կան շրջանառության մեջ դնելու իմաստով, այլ և նրա գաղափարների ու սկզբունքների վերլուծության այժմեականության իմաստով:

Գ. Ա. ՄԵԼՈՒՄՅԱՆ